# ԹԻՖԼԻՍԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

ԹԻՖԼԻՍ, 20.— Հուլիսի 14-15-ը Թիֆլիսի սկզբնական կուսակցական կազմակերպություններում, ցեխերում ու բրիգադներում ընթերցվեց Հայաստանի Կ(բ)Կ կուսակցական ակտիվի բանաձևը՝ ընդունված Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար Ա. Խանջյանի ինքնասպանության հանգամանքների մասին Համ. Կ(բ)Կ Անդրյերկոմի քարտուղար ընկեր Ս. Կուդրյավցևի հաղորդման առթիվ:

Հայաստանի Կ(բ)Կ կուսակցական ակտիվի բանաձևը լիակատար հավանության արժանացավ Թիֆլիսի կուսակցական կազմակերպությունների և աշխատավորության մեջ:

Ժողովներում հանդես յեկած կուսակցության ու կոմյերիտմիության անդամները, անկուսակցական բանվորներն ու ծառայողները միաբանորեն միացան Ա. Խանջյանի դավաճանական արարքի առթիվ Հայաստանի Կ(բ)Կ ակտիվի բանաձևի մեջ տրված գնահատականին.